

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՐ ԾՐԱՎՈՐԻ, ՄԻԱՅՆԻ

Ե. ՀՈՎՈՒԹՅՈՒՆ

3-ԹՊ =====
ՎՃՌԱԿԱՆ ՏԱՐՎԱ
===== ԶԻՆԱԿՈԶԵ



ՀՐԱՄԱՆԱԿԱՆ ՀԱՆՈՒՍԵՐԻ Ա. (թ) Ա. ԱԲՐԵՎԱՆԻ
ՔԱՂ. ԿՈՄԻՏԵՑՅԻ



1931 թ.

1931 թ.

1 MAR 2010

355.2

2-82.

ՄՊ

ՊԵՂԱՎՈՐԸ ԲԱԼՈՐ ՅԵՐԱԲԵՐ, ՄԻԱՅԵՐ

Ճ. ՀԱՎԱԵՓՅԱՆ

3-ԲԴ=

ՎՃԹԱԿԱՆ ՏԱՐՎԱ

= ԶԻՆԱԿՈԶԵ

2043



15400-57

Խ. Ե. Բ. Ե. Ա. Ե. Ա.

1931 Փ.

2152

14 JUN 2013

41/60

ՀԵՐԱԿԱՆ ԶԻՒԱԿՈՉԸ ՅԵՎ ԽՍՀՄ ԱՐՏԱՔԻՆ ՅԵՎ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1909 թ. ծնված քաղաքացիների հերթական զինակոչի իսկական զինվորական ծառայության կանչելու աշխատանքներն այս ապրի տեղի յեւ ունենում կատիտալիստական աշխարհի որբատ որեւ խորացող ճգնաժամի և սոցիալիզմի կառուցող յերկրի անտեսական վիթխարի ուժման պայմաններում:

Հերթական զինակոչի հաջող անցկացման ապահովումը յուրաքանչյուր բանվորի, կոլխոզնիկի ու աշխատավոր գյուղացու գործն և Զինակոչը պետք և դառնա մի սառուղատես պարզելու համար թիւ վորչափ յուրաքանչյուր բանվոր, կոլխոզնիկ ու աշխատավոր գյուղացի պատրաստ են Խ. Ս. Հ. Մ. կ. պաշտպանության գործի համար:

Մեղանից յուրաքանչյուրը յերկրի սոցիալիստական շինարարության, ինդուստրացման և գյուղի կոլեկտիվացման գործին ազելի ակտիվ մասնակցելով պետք և հատուկ օւշագրություն գարձնի յերկրի ինքնազաշտականության հետ կազմած խնդիրներին և ակտիվ մասնակցություն ունենա հերթական զինակոչի աշխատանքներին, վորը չափազանց պատասխանատու և խոշոր նշանակություն ունեցող քաղաքական մի կամպանիա յեւ:

Կոմունիստական կուսակցության զեկավարությամբ մեր յերկրում բանվոր գանձակարգը կոլանտեսության աշխատավոր գյուղացիություն հետ միասին կառուցում և սոցիալիզմ, այս տարի ավարտինվ սոցիալիստական անտեսության հիմքի կառուցումը:

Խորհրդային Միության քսան հինգ միլիոն տնտեսություններից տասնհինգ միլիոնը կամ նըստց 57% է այս ավելին այժմ գտնվում են կոլեկտիվներում:

Կուսակցությունը բանվոր գանձակարգի հետ միասին արդ նվաճումներին հասկ և անխնա պայքարով կենքինյան ճիշտ զծիք

համար, փշրելով դասակարգային թշնամու կատաղի գիմադրությունը, ջախջախելով նրա գործակարությունը ներկա քը անկ գլխավոր վագանդ աշ թեքումը և տրոցկիստական ռձախ հոսանք ները:

Այժմ Խորհրդային Միության մի շարք շրջաններում (հյուսական կովկասում և այլն) հիմնականում արգեն ավարտված և համատարած կոլլեկտիվացումը: Մեզ մոտ Անդրկովկասում և Հայտառանում նույնպես կուսակցության Անդրյերկվոմի և Հայկոմկուսի բայլշնիկյան զեկավարությամբ զգալի նվաճումներ են ձեռք բերված զյուղի սոցիալիստական վերակառուցման ասպարեգում:

Ամրող Անդրկովկասում զյուղացիական տնտեսությունների 36% և Հայտառանում մոտ 26% հաշվվում են կոլխոզներում:

Հնգամյակը վորը սկզբում ծաղրի յեր յենթարկվում ամբողջ կապիտալիստական աշխարհի կողմից, հարցականի տակ եր առնվում բոլոր ոպորտունիստների կողմից, այսոր նա իրագործում է 4 տարում, իսկ արդյունաբերության մի շարք վճռական ձևողերում յերեք և յերկուս ու կես տարում:

Հնգամյակի յերրորդ վճռական տարում գործի յեն զրկում 518 մեծ ձեռնարկություններ և 1040 մեքենարակտորային կայաններ:

Մենք ամբողջ թափով առաջ ենք զնում, տնտեսական կուտուրական վերյելքի սոցիալիզմի կառուցման ձանալարհով, սակայն այլ պատկեր և իրենից ներկայացնում կապիտալիստական աշխարհում գնալով ավելի յե խորանում հակասությունները սոցիալիզմի և կապիտալիզմի միջն:

«Հակասությունները կապիտալիստական ու սոցիալիստական սիստեմների միջև յերեք չեն զարգացել ոյնպիսի ուժով յեկ սոցիալիստական սիստեմի տռավելությունն ընդդեմ կապիտալիստական սիստեմի յերեք չեր հայտնաբերվել այնպիսի պարզ ձևելով, վարչակայժման (Կոմիստերնի գործկոմի XI պլենումի բանաձեվերից). կապիտալիստական պետությունները նոր շուկաներ գրավելու, աշխատք նորից վերաբաժնելու և տնտեսական ձգնաժամկց գուրս գալու համար չտեսնված արագությամբ պատրաստվում են նոր, ավելի արյունահեղ պատերազմի, քան իմակարիալիստական համաշխարհային պատերազմն եր, պատերազմի պատրաստություն-

4

ներն առաջին հերթին ուղղված է լինելու ԽՍՀՄ-ի դեմ:

Կապիտալիստական անտեսության ձգնաժամը նպաստում է բանվոր դասակարգի հեղափոխական վերյելքի աճմանը: Կապիտալիզմը սպառել է այլև տնտեսություն կազմակերպելու և դեկավարներու իր ընդունակությունը և իր միակ փրկությունը գանում է նոր պատերազմների կազմակերպման մեջ:

Խորհրդային Միությունը, վորը հանդիսանում է համաշխարհային պրոլետարական հեղափոխության ոջախը, նրա առաջավոր ու հարվածային բրիգադը իր որինակով նոր թափ և հազորում կապիտալիստական յերկրների բանվոր դասակարգի հեղափոխական շարժմանը:

Այս հանգամանքը նույնպիս ուժեղացնում է պրոլետարական պետության և կապիտալիստական աշխարհի միջև գոյություն ունեցող հակասությունները:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՆ ՊԱՏՐԱՍ- ՈՒՄ Խ. Ս. Հ. Մ.-Ի ԴԵՄ

Կապիտալիստական տնտեսության համաշխարհային ձգնաժամի հետևանքով բանվոր դասակարգի և աշխատավոր զյուղացիության համար ստեղծվել են ապրուստի ծանր պայմաններ, տառնյակ միլիոնավոր բանվորներ իրենց ընտանիքներով մատնելված են սովի, միլիոնավոր բանվորներ արդյունաբերության մեջ լրիվ չեն աշխատում և որ որի վրա այդ գրությունը ավելի յե սրբում:

Ամերիկայում գործադուրկ բանվորների թիվը հասնում է 12 միլիոնի, ֆերմանիայում՝ 5 միլիոնի, Անգլիայում՝ 3 միլ., Շապոնիայում՝ 2½ միլիոն, ներկայում գործադուրկ բանվորների թիվը կապիտալիստական աշխարհում հասնում է 38 միլիոնի:

Այսպիսով մեզ մոտ Խ. Ս. Հ. Մ. սոցիալիստական շինարարության վերելք յեկ արդյունաբերության յեկ զյուղատեսառության մեջ: Նրանց մոտ, կապիտալիստների մոտ, եկանոմիկայի հարահուն նզմանման քե արդյունաբերության յեկ քե զյուղատեսառության մեջ» (Սալլի):

Մենք վերացրել ենք մեր յերկրից գործադրկությունը, գնաւզեկի բարելավվում և զող բանվոր դասակարգի, կոլտնտեսական և աշխատավոր զյուղացիության նյութական, կուլտու-

5

բական զբությունը:

Մեղ մոտ՝ Խորհրդավիճ Միության մեջ, Կոմկուսի զեկավառությամբ բանվոր դասակարգի սոցիալիստական մրցման ու հարգածայնության նշանաբանի տակ չտեսնված թոփչքներ և կատարվում արդյունաբերության և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում:

Այս տարվա 1931 թվի առաջին հինգ ամսվա ընթացքում անցյալ տարվա նույն ժամանակի հետ համեմատած արակարային արդյունաբերությունն աճել է 129%/₀-ով, ելեքտրոնենիկական արդյունաբերությունը՝ 42%/₀-ով, մետաղաձուլությունը՝ 108%/₀-ով, նավթի մշակությունը՝ 34,4%/₀-ով, հիմնական քիմիկական արդյունաբերությունը՝ 19,4%/₀-ով արիկոտաժը՝ 20%/₀-ով, կարի արդյունաբերությունը՝ 50%/₀-ով, արդյունաբերության վերելքի հետ միասին հսկայական են նաև գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում ձեռք բերված նվաճումները:

1929 թվին մեղ մոտ ցանված եր 118 միլիոն հեկտար, 1930 թվին՝ 127,8 միլիոն հեկտար, 31 թվին՝ 138 միլիոն հեկտար, իսկ 1913 թվին ցանված եր յեղել 105 միլիոն հեկտար տարածություն։ Այս տարի 97 միլիոն 32 հազար հեկտար դարնանցանից կոլտնտեսությունները ցանելու յեն մոտ 58 միլիոն հեկտար։ 20 միլիոն անհատական անտեսությունները և ննացածը խորհրդավիճ անտեսությունները։

Բամբակի ցանքսի պլանը այս տարի կատարվել է 102,5%/₀-ով, վորք անցյալ տարվա ցանքսի 150,5%/₀-ն և կազմում։

Մեր անտեսության վերելքին հսկառակ, կազմիալիստական բոլոր լերկրների արագրանքը արագ կերպով ընկնում է, բացի ուղմական արդյունաբերության արտադրանքը։

Չուգունի արագրության բնագավառում մի տարում Միացյալ Նահանգներում անկումը հասել է 44%/₀-ի, Անգլիայում՝ 40%/₀-ի, Գերմանիայում՝ 41%/₀-ի, Ֆրանսիայում՝ 12%/₀-ի, Իտալիայում՝ 20%/₀-ի։

Պողպատի արտադրության բնագավառում մի տարում Միացյալ Նահանգներում հասել է 42%/₀-ի, Անգլիայում՝ 43%/₀-ի, Գերմանիայում՝ 37%/₀-ի, Ֆրանսիայում՝ 17%/₀-ի, Իտալիայում՝ 23%/₀-ի։

Քարածուխի արտադրության ասպարեզում Ամերիկայում

6

արտագրանքը ընկել է 30.ից 40%։ Կրճատվել է արտաքին առևտուրը, արտահանումը Միացյալ Նահանգներում իջել է մինչև 23%/₀-ի, Անգլիայում՝ 24%/₀ ով, Գերմանիայում՝ 14%/₀-ով, Իտալիայում՝ 20%/₀-ով։

Այսպիսով սնանկանում է գյուղացիությունը, դեպի քաղաք են հսում միլիոնավոր ընչազուրկ գյուղացիներ, տասնյակ միլիոնների են հասնում գաղութներում սովոր մատնված գյուղացիների թիվը, Գյուղատնտեսական բանվորների աշխատավարձը անցյալ տարվա հետ համեմատած կրճատվել է մոտ 30%/₀-ով։

Կազմիալիստական պետությունները տնտեսական այլ ճգնաժամկեց վերագրում են բոլշեվիկներին, աշխատելով ամեն կերպ մթագնել հետամնաց բանվորական մասսաների գիտակցությունը, այն բանում, վոր Խորհրդային Միության կողմից իրենց յերկրները ներմուծվող ապրանքներն ավելի լին խորացնում այդ ճգնաժամությունը, և ապիտավիստական պետությունները ամեն կերպ աշխատում են թաղցնել իրենց սնանկությունն ու անկարողությունը յերկրները օնտեսական և ֆինանսական ճգնաժամից դուրս բերելու դորձում։

«Տեսներ, թե ինչպես են կազմիալիստներն ուղղում դժուս կալ ճգնաժամից։ Նրանք առաջելագույն շափով իջեցնուած են հումուրի և պարենավորման մթերքների գները, Սակայն նրանք չեն կամենում վորելիք լուրջ կերպով իջեցնել արդյունաբերական ապրանքների գները։ Այդ նշանակում են, վոր նրանք ուղղում են ճգնաժամից դուրս կալ ի հաշիվ ապրանքների հիմնական ոպառողների, ի հաշիվ բանվորների, ի հաշիվ գյուղացիների, ի հաշիվ այն յերկրների աշխատավորության, վորոնք հումուրի ու պարեն են պատրաստում։ Կազմիալիստները կարուծ են այն ճյուղը, վորի վրա նստած են իրենք, թեվ փոխանակ ճշնաժամի յելքի, ստացվում են նրա խորացում, ստացվում են այնպիսի նոր նախագրյալների կուտակում, վորոնք տանում են զեղի նոր ավելի գաժան ճգնաժամ։» (Ստալին)

Խորհրդային Միության պայքարը ցույց է տալիս խորհրդագների յերկրի գեմ ուղղված պատերազմի անող վտանգը։ Խ. Ա. Հ. Թ. կեմ ուղղված պատերազմը դարձել է տնմիջական վտանգ նաև ամբողջ համաշխարհային պրոլետարիատի համար։

Կապիտալիստական յերկրները լավ զիտեն, վոր Խորհրդացին իշխանությանը հաղթել հեշտ չի, քանի վոր նրանց կողմից կատարված բոլոր փորձերը միշտ ել հետ են մզկել ստանալով արժանի պատասխան, նրանք լավ գիտեն և այն, վոր միշտ յերկրի տնտեսական ու քաղաքական ամրացման հետ միասին աճում և միջազգային հեղափոխական շարժումը և ուժեղանում գաղութակին ժողովուրդների ազատագրական պայքարը:

Միայն Անգլիայում 31 թվի ընթացքում տեղի յին ունեցել 134 խոշոր գործադրությունների 460 հազ. բանվորների մասնակցությամբ 5 միլիոն 255 հազ. բանվորական որվա կորուստով:

Յեկ քանի խորանում եր կապիտալիստական աշխարհի ճըգնաժամը, քանի ցած և գլորվում կապիտալիզմը, մյուս կողմից քանի հզորանում և ուժեղանում ե խորհուրդների յերկրը, այնքան ավելի և սրվում բուրժուազիայի և պրոլետարիատի միջև գասակարգային կռիքը: Կապիտալիստական պետությունները ստիպված այդ դաշտությունից յելք են փնտրում, իմպերիալիստական պատերազմի մէջ, վորը ողղված կլինի առաջին խոկ հերթին Խ. Ս. Յ. ի գեմ:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը, ուժեղացնում և պայքարն իմպերիալիստական զանազան խմբավորությունների միջև, խաղաղասիրական քարոզների ներքո ան ընդհատ աճում են սպառագինությունը, ռազմական բյուջեն Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, Անգլիան, Իտալիան, Յապոնիան 1913 թ. սպառագինությունների համար ծախսել են 2 300 միլիոն վոսկի ոռոքի, 1926 թվին՝ 3 900 միլ., 30 թվին՝ 5 700 միլիոն վոսկի ոռոքի:

Մեր հարեւան պետությունների սազմական բյուջեները 1923 թվին յեղել ե 184 միլիոն, 1930 թվին արդեն 258 միլիոն ոռոքի:

Կապիտալիստական պետությունները հատուկ ուշադրություն են դարձնում իրենց բանակների տեխնիկական հզորության վրա: Կատարելագործվում են կովի տեխնիկական միջացները, Յեթե 1-14 թվին կովող յերկրների հետևակ գիլիկիաներն ունեյին մ/ջին հաշվով 24 գնդացիր, 1930 թվին հետևակ գիլիկիան ունի հաստոցավոր գնդացիր՝ Ֆանսիայում՝ 172 հատ, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ 227, Ան-

գլիայում՝ 192, Լինաստանում՝ 128: Իմպերիալիստական պատերազմի նախորյակին հետևակ զորամասերը, վորոնք զաղափար չունեյին ձեռքի գնդացիրի մասին, 1930 թվին ֆրանսիական գիլիկիայում նրանց քանակը յեղել ե 341, ամերիկյան գիլիկիայում՝ 1440, անգլիականում՝ 344, լինականում՝ 341:

Ուժեղացել ե հետևակի կրակի ուժն ու զիպուկությունը, ավելացել ե նաև հրետանու արագաձգությունն ու հեռահարությունը:

Զանանված արագությամբ աճել ե թե քանակով և թե վարակով սազմական ավիացիան 1914 թվին 5 միծ պետություններ ունեյին ընդամենը 350 սավառակի խոկ 30 թվին 3,700 սավառնակի: Արագացել ե նրանց թորհքը, մի ժաման 1918 թվի 130 կիլոմետրի փոխարեն, հասել ե 280-ի և նույնիսկ ավելի մինչեւ 345 կիլոմետրի:

Հատուկ ուշադրություն ե դարձնում բանակների անձնական կազմի ավելացման վրա: Բոլոր բանակներում ավելացել են տեխնիկական զորամասերը:

Կապիտալիստական 5 միծ պետությունները 1913 թ. ունեյին միկ միլիոն 827 հազար զինվոր, այժմ պահում են 2 միլիոն 68 հազար զինվոր: Ժամանակակից բանակների տեխնիկական հզորությունն ուժեղացնելը պահանջում է ավելի մեծ ծախսեր կատարել սազմական գործի վրա: Անգլիան սազմական նպատակների համար ծախսում է իր բյուջեյի 15% ը, նույն նպատակների համար Ֆրանսիան ծախսում է իր բյուջեյի 2/3-ը մասը, Իտալիան՝ 28% ը, Լինաստանը՝ 30 տոկոսը:

Բանակների և սպառագինությունների աճման հետ միասին կապիտալիստական պետությունները հատուկ ուշադրություն ուղարձնում մասսայական սազմականացման գործի վրա, սահեծելով կիսառազմական, ֆաշիստական զանազան միություններ ու կազմակերպություններ:

Եթե 1914 թվին 5 միծ պետություններում 7-8 միլիան սազմականացես պատրաստված քաղաքացիներ կային, 1930 թ. նրանց քանակը հասնում է 20 միլիոնի: Եթե 1914 թվին Գերմանիայի բնակչության 55 տոկոսն եր զենք կրելու ընդունակի այժմ՝ այդ տոկոսը հասնում է 75-90-ի, խոկ Ֆրանսիայում այդ տոկոսը մոտենում է 100-ի:

Անգլիան, Գերմանիան, Իտալիան, Լիհաստանը, Ռումինիան, Հայութի ուղաղրություն են գարնում վերոհիշյալ կազմակերպությունների միջոցով ավելի մեծ թփով յերիտասարդություն ընդուրկեն։ Կիսառազմական Փաշխտական այդ կազմակերպությունները իրենց շարքերում ընդուրելում են ավելի քան 3,005,000 հոգի։

Ֆաշխտական այդ կազմակերպությունների նպատակն են նշել բանվոր գասակարգի հեղափոխական շարժումները, յուրաքանչյուր կադիտալիստական յերկրի ներսում, պատրաստի ուժ հանգիստանալ պատերազմի դեպքում, վորն առաջին հերթին ուղղված կլինի և Ս. Հ. Մ.-ի դեմ։

Սակայն «այժմ զինված հարձակում դործելը և. Ս. Հ. Մ.-ի վրա զիթավորապես վտանգավոր և նրանց համար, ովքեր կհամարեակին խախտել խաղաղությունը և հարձակվել Խորհրդային Միություն վրա» (և. Ս. Հ. Մ.-ի խորհուրդների 6-րդ համագումարի զորոշումներից)։

Պատերազմի պատրաստման գործում պակաս դե չի խազում։ Նաև բանվոր գասակարգի դավաճան սոցիալ-դեմոկրատիան, ամբողջ յերկրորդ ինտերնացիոնալը։ Միջազգային սոցիալ-դեմոկրատիան իր վրա և վերցրել կապիտալիստական փթած աշխարհի խորակումը հետ պահելու դործը, պատերազմը պատրաստելու տշխտանքը։

Սոցիալ-դեմոկրատիայի անմիջական ակտիվ մասնակցությամբ կապիտալիստական պետություններն աշխատում են միացյալ հակասով գուրս գալու Խորհրդային Միություն դեմ։

Հակախորհրդային պատերազմի պատրաստման մեջ ամենայենանգուն և ակտիվ գերն են խաղում Անդրկովկասից վտարված նաև զաշնակները, մուսաֆաթականներն ու մենշեկները։ Անգլիովկասի բանվորա-գյուղացիական մասսաների յերդից թշնամիներն ու նենգավոր դաշիները։

Դաշնակցությունն այսոր հենվելով յերկրի ներսում կույսակային տորերի վրա, վոչ միտին գիմարքում և սոցիոլիստական հաղթարքազին, ուլ և նու պատովազօր» աեղ և գրավում հակախորհրդային պատերազմի պատրաստման չնդիտուր շղթայում լինելու նրա ողակներից մեկը։

Դաշնակցությունը մենչեկների և մուսաֆաթականների հետ ձգում է ամեն կերպով թուլացնել անդրկովկասյան ազգու-

թյունների աշխատավորության ինտերնացիոնալ համերաշխատ-թյունը, անգրկովկասյան ֆեդերացիան և այդուսով հետացնել խորհուրդների դեմ ուղղված ինտերվենցիան։ Հականեղափոխական զաշնակցության այդ բոլոր փորձերին մեր յերկրի աշխատավորությունը ավել և և կոտ արժանի հականարված։

Զինակոչը մի խթան պետք և լինի անգրկովկասյան ֆեդերացիության անտեսական և քաղաքական հիմքերի ավելի ամրացման 3-րդ վճառական տարվա պլանների կատարման համար։

1909 թվի զինակոչը պետք և խողոր աղղակ լինի անգրկովկասյան ժողովուրդների և զինակոչիների ինտերնացիոնալ կոտ պի ուժեղացման և որի մեր բոլոր կազմակերպությունների պայքարը գաշնակցության դեմ, վելիկուուստական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի դեմ։ Սոցիալիզմի կառուցման զորմեա ապահովելու համար պետք և ուղղականացնենք մեր վողջ կյանքը, ավելի հզոր զարձնենք մեր կարմիր բանակը, կարմիր բանակի հզորության և նրա մարտունակության հետագա բարձրացման գործը կապված և նաև նրանից, թե հերթական զինակոչը ընթացընտեմ ինչպիսի կադր ենք տալիս բանակին և վորքանով զինակչիք հետո ամեն կերպ նպաստում ենք կարմիր բանակի մարտունակության բարձրացմանը։

Խ. Ս. Հ. Մ. ՎԱՐՈՒՄ Ե ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻ

Զնայած կապիտալիստական պետությունների կողմից զեղութեա մեզ ունեցուծ թշնամական վերաբերմունքին ու պատերազմի պատրաստման, այնուամենայնիվ Խորհրդային իշխանությունը միշտ ել ձգաել և ու զորձնականում ապացուցել իր խաղաղատիւ քությունը։ Մենք սոցիալիզմ ենք կառուցում, մենք ձգում ենք աեխնիկապես և անտեսելու հասնելու և առաջ անցնելու կապիտալիստական առաջավոր յերկրներից։

Մեր խաղաղասիրությունը հասասավում և մեր կարմիր բանակի քանակի փոթրաթիվ լինելով, նրանով, զօր ուղղական ծախոեը կողմում են Ա. Ս. Հ. Մ.-ի թվի բյուջեի մեջ միայն 6,1 տակոսը։

«Պատերազմի տեսզ վատնգին, վորի հոմար ավելի ու ավել մի համառըւն պրողագանդ են մզում և պատրաստում են իմ-

պերիալիստները, մենք հակադրում ենք ու կհակադրենք առաջին ճերթին մեր հարածուն սոցիալիստական ինդուստրիան, մեր ամբողջ սոցիալիստական շինարարության հաջող ընթացքը, մեր հարժեքը բանակը՝ Խորհրդային պետության հավատարիմ պահակին և այն համակրանքը, զոր զեպի մեր յերկիրն են տածում ամբողջ աշխարհի աշխատավորները» (Վորոշիլով):

Խորհրդային իշխանությունը տարել և և տանում և խաղաղության քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը մենք կվարենք և հետագայում բոլոր ուժերով, բոլոր միջոցներով: «Ուրիշի վոչ մի թիզ հող մենք չենք ուզում, բայց և վոչ մի վերջոք մեր հոդից վոչ վոքի չենք տա, մեր ինդիրը նրանումն է, զոր սրանից հետո ևս շարունակենք այդ քաղաքականությունը, այն համառությամբ, զորը հատուկ և բայց կիսերին:

(ՄՏԱԿԻՆ):

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԱՄՐԱՑՈՒՄԸ Ի. Ս. Հ. Մ-Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե

Եերբ և բնակչութիւն իշխանությունը անշեղորեն վարում և խաղաղասիրության քաղաքականությունը կան սիելոքներ, վորոնք խկոյն ասում են, ապա ինչու յենք պահում Կարմիր բանակը: Այդպիս մտածողները չեն հասկանում, զոր կապիտալիստական աշխարհի շ ջապատում սոցիալիզմի կառուցման դորձը առաջ տանելու և մեր յերկիրը իմպերիալիստական հարձակումներից պաշտպանելու համար, անպայման անհրաժեշտ և մեզ կարմիր բանակը: Ապահովիլ խաղաղության համար մզկող խոկան պայքարը, պատերազմի աճող վասնգի ու սպառազինումնե ի պայմաններում կարելի յե միայն հենքելով սոցիուլիզմ կառուցող մասսաների ու հզոր մարտունակ Կարմիր բանակի վրա, այդ լավ գիտեն իմպերիալիստները ու մեր ներքին թշնամիները:

Նրանք ստիպված են հաշվի առնել մեզ հենց այն պատճառի, զոր նրանք լավ կիտեն թե ինչպիսի հզոր հենարան ունի Խորհրդային իշխանությունը հանձինս հաղթական Կարմիր բանակի: Զին Արեվելյան յերկաթուղու գեպերը և նրա զասերն իմպերիալիստական աշխարհի համար մի անգամ ևս ապացուցեն կապիտալիստներին, Խորհրդային իշխանության զեմ զենք

բարձրացնելն այնքան ել հեշտ գործ չե, զոր հարկավոր և հաշվի առնել ե. Ս. Հ. Մ. ուղղմական հզորությունը:

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը, մեր ծավալուն հարձակումը կապիտալիստական տարրեկի մացորդների վրա յերկրի ներսում, ավելի և սրի զասակարգային պայքարը: Կուլտակը, նեպմանական տարրերը և նրանց կուսակցությունները գաշնակները, մենշերիկները, մուսաֆաթիստները փորձում են ամեն կերպ արդիւակել սոցիալիստական շինարարությունը: Այսպիսով նրանք հանդիսանում են իմպերիալիստական ինտերվենցիան նախապատրաստող վճռական ողակներից մեկը: Ան ինչու պետք և ավելի ծավալել սոցիալիստական հարձակողականը լուծելու համար «ովք ում»-ի հարցը նաև զյուզում, ան ինչու մեզ ավելի քան անհրաժեշտ և ուշադրություն դարձնել յերկրի պաշտպանության դորձին, ել ավելի ամրացնել Կարմիր բանակի ստրական կորովը, յուրաքանչյուր բանվոր ու աշխատավոր պետք և ամրացնի իր հարազատ Կարմիր բանակի շարքերը:

ՎՈՉ ՄԻ ԱՆՀԱՐԱԶԱՏ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ

Յուրաքանչյուր բանակ հանդիսանում և իշխող դատաստկարգի զենքը, նրա իշխանությունը ամրացնելու համար: Կարմիր բանակը պրոլետարական դիկտատուրայի զենքն եւ նա զասակարգային բանակը պահպան և բանվորներից, կոլտնտեսականներից, աշխատավոր զյուղացիներից, նրանցից վորոնք չեն շահագործում ուրիշի աշխատանքը: Կուլտակները, նեպմանները, առևտրականները, ինչպիս և նախկին ժանդարմների ու հոգեորականների զավակները տեղ չունեն Կարմիր բանակի շարքերում: Նրանք զենք կրելու իրավունք չունեն: Մեր յերկրում զենք կրելը, յերկիրը պաշտպանելու պատգամի գործը բանվորական ու աշխատավորական մտասաների սեփական դորձն եւ Կարմիր բանակում ծառայելու իրավունքից զրկված անաշխատ տարրերի վրա խաղաղ ժամանակ դրվում և պարտազիր հանրողութա աշխատանք կատարելու գործը:

Զինակոչի ժամանակ խոշոր պարտակություններ ունի կատարելու յուրաքանչյուր բանվոր, կը լիովնիկ, բատրակ ու աշխատավոր զյուղացի: Նրանք զեմ ավելի մասնակություն տան զինակոչին, ամեն կերպ զերծ պահելով Կարմիր բա-

Նակը գասակարգային խորթ տարրերի սողոսկումից և ոգնեն կուռակցությանն ու իշխանությանն այդ գործում։ Եյս կարեփ և առանձնազիս ներկայումս, զաօակարգային պայքարի սրման ներկա պայմաններում։

Մեր յերկրի ինդուստրացման հետ աճում և քանվորների ուժուող զորակոչիների մեջ, փոխվում ե բանակը յիկող զյուղացիական յերիտասարդության դեմքը, գնալով ավելանում և բանակի շարքերում կոլանածեսական յերիտասարդության առկօսոր։ Այսպիսով ել ավելի ամրանում ե Կարմիր բանակի զաօակարգային հզորությունը։

Այն ժամանակ, յերբ ցարական բանակում հրամկագիր մեջ աշխնականները կազմում եին 51 առկոս, 30 առկոսը վտառապահության մեջ բուրժուազիայից երին, 8 առկոսը կազմակներից, 3 առկոսը հոգեորականությունից, մեզ մոտ, Կարմիր բանակում հրամանատարական կազմը իր սոցիալական ծագումով այսպիսի պատճեր և ներկայացնում։ Հրամանասերի միջին հրամկագիր մեջ բանվորները կազմում են 32,3 առկոսը, բատրակները՝ 2,3 առկոսը, գյուղացիները՝ 46,1 առկոսը, ծառայողները՝ 16,8 առկոսը և այլք՝ 2,6 առկոսը։ Հեծելազորի միջին հրամկագիր մեջ բանվորները կազմում են՝ 34,7 առկոս, բատրակները՝ 3,6 առկոս, գյուղացիները՝ 43,1 առկոս, ծառայողները՝ 17,6 առկոս, այլք՝ 2,1 առկոս։ Հրամակային զորամասերի ավտոգույնական կուռակցությունը՝ մեջ բանվորները կազմում են՝ 23,1 առկոս, հեծելազորի այսպիսում՝ 28,3 առկոս։

Գետ կազմից 82,7 առկոսը մասնակցել են քաղաքացիական կոփչներին։

Գետ կազմի և Կարմիր բանակայինների փոխ հարաբերությունները նման չեն կազմական բանակների փոխ հարաբերությանը, մեզ մոտ Կարմիր հրամանատարը բանակայինի ամենամոռ ընկերն է, հրամանատարը մինչնույն ժամանակ հանդիպանում և բանակայինի ավագ ընկերը, վորին Խորհրդային իշխանությունը հանձնաբարել և տվյալ զորամասի ղեկավարությունն ու Կարմիր բանակայինների դասախրամկության գործը։ Զիտ բանակայինի և պետ կազմի մեջ փօխադարձ առելություն, նըտեղ կազմում են մեկ ամբողջություն, նրանք մեկ ընդհանուր զաօակարգային շահեր ունեն, նրանք կոչված են պաշտպանության վեհական գործությունը։ Ա. Հ. Մ. ը.

Կարմիր բանակը մտըտական զպրոց ե, վորտեղ պահպարները և աշխատավորները սովորում են լերկրի ինքնապահապահության գործը։ Կարմիր բանակը հանդիսանում է քաղաքացիական կուռական դասախրամկության հակայտական դպրոց, քաղաքական պատասխանքը ուղղական ուսուցման անբաժան մասն և կազմություն, նրանց անշատել մեկը մյուսից չի կարելի։ Չի կարելի պատկերացնել Կարմիր բանակն առանց քաղաքական աշխատանքների։ Կարմիր բանակայինի քաղաքական պատրաստությունը, զաօակարգային գիտակցությունը հանդիսանում են Կարմիր բանակի մարտական պատրաստության և ամուս կարգագության հիմքը։

Առանց քաղաքական պատրաստության շկա մարտունակ Կարմիր բանակը «Աշխարհում առաջին անգամն ե, վար աեզդված և այնպիսի բանակ, այնպիսի զինված ուժ, վար զինված, բնի համար և ինը կրթաւմ։»

Կարմիր բանակում լայնորեն ծագալված և քաղաքական աշխատանքը, բանակում կան 110 հազար զին թղթակիցներ, մոտ 9,000 պատի թերթ, մինչև 500 հազար ընթերցողներ, 800-ից ավելի ակումբ, 1,600 գրադարան։

Կարմիր բանակը յսւրաքանչյուր տարի, զորացրման ժամանակ հսկայական ուժեր և տալիս գյուղի սոցիալիստական շինարարությանը։ Այսպիս օրինակ՝ 1927 թ. Կարմիր բանակը գյուղի կոնկրետ աշխատանքների համար տվել ե 31,756 մարդ, 28 թ. 67,998 մարդ, 29 թ. 108,742 մարդ, 1980 թ.՝ 100 հազարից ավելի զանազան վորակի մասնագետներ, վորանց թվում կուլտուրների գեկավարներ, դաշտա-կենդանաբույժներ, տրակտորիստներ, կուլտուրական աշխատազներ և այլն։ Այսպիսով Կարմիր բանակը ակտիվ մասնակցություն և ցույց տալիք սոցիալիստական շինարարությանը և ավելի բարձր տատիճանի վրա գնելով պրոլետարիատի դիկտուրությի Կարմիր բանակի մարտունակությունը և հզորությունը։

ԸՆԿ. ԱՏԱԼԻՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Կարմիր բանակը, վորպես պրոլետարիատի զիկտատուրայի բանակ, վորը պաշտպանում և սոցիալիստական շինարարության գործը միանգամայն տարրերգում և կոպիտալիստական բանակ-

Ներից, վարի մասին ահա թե ինչ և ասել Համբումկուսի առաջնորդ ընկ. Ստալինը:

Մեր Կարմիր բանակի առաջին յիշ հիմնական առանձնահատկությունն այն է, որ նա պատարգիած բանվաների ու զյուղացիների բանակ է, պրալետարիատի դիկտատուրայի բանակ է: Մինչ այժմ գոյություն ունեցող բանակները, ինչպիսի կազմ եւ ունենալիս լինեն, հանդիսացել են կապիտալիզմի տիրապետության հաստատման բանակները: Նրանք յեղել են ու մետաղել են կապիտալի տիրապետության բանակները: Բոլոր յերկրների բուրժուազիան ստում է, յերբ ասում է, վոր բանակը քաղաքականացես չեղոք է, սխալ և այլ: Բուրժուական պետություններում բանակը զրկված է քաղաքական իրավունքներից, նա հեռացված է քաղաքական ասպարեզից, այդ ճիշտ է: Սակայն դա ամենեին չի նշանակում, վոր նա քաղաքականապես չեղոք է, ընդհակառակը միշտ է ամենեին կապիտալիստական բոլոր պետություններում բանակը ներզրագիտի ու ներզրագիտ և քաղաքական պայքարին, գործիք ծառայելով բանվորների ճնշման համար:


Հակառակ այդպիսի բանակների, մեր Կարմիր բանակն ունի այն առանձնահատկությունը, վոր նա զենքն և հանդիսանում բանվորների և գյուղացիների իշխանության հաստատման, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման, վենք կալվածատերի ու կապիտալիստների լից, բանվորներին ու գյուղացիներին աղատագրելու զենք: Մեր բանակը աշխատավորների ազատքաման բանակ է: Հին ժամանակ, այսինքն նենց այժմ ել կապիտալիստական յերկրներում, ժողովուրդը վախենում եր ու շարունակում է վախենալ բանակից, ժողովրդի և բանակի միջև դոյություն ունի մի պատճեց, վորն անշատում է ժողովրդին բանակից: Մեզանում ընդհակառակը ժողովուրդն ու բանակը կազմում են մի ամբողջություն, մի ընտանիք: Աշխարհում վոչ մի տեղ չկա այդպիսի հոգատար վերաբերմունք ժողովրդի կողմէց զեղի բանակն, ինչպիս մեզանում: Մեզանում բանակին սիրում են, նրան հարգում են, նրա մասին հոգում են, —ինչու: Վորովինեռ աշխարհում առաջին անգամ բանվորներն ու գյուղացիները ստեղծել են իրենց սեփական բանակը, վորը ծառայում է վոչ թե տեղերին, այլ նախկին սարուկներին: Այժմ

աղատագրված բանվորներին ու գյուղացիներին:

Կարմիր բանակի 2-րդ առանձնահատկությունն այն է, որ նա, մեր բանակը, հանդիսանում ծողովութեան միջել լեղաբարության բանակ, մեր յերկի ազատությունն ու անկախությունը պատճենու բանակ: Հին ժամանակ սովորաբար բանակը դաստիարակվում եր շովինիզմի վոգով, հափշտակության վոգով, ոտար ժողովուրդներին ճշշելու վոգով, դրանով ել հենց բացատրվում է, վոր հին ափի բանակները, կապիտալիստական բանակները, մինույն ժամանակ գաղութային բանակներ են: Այդ եր հին բանակի հիմնական թիրություններից մեկը: Մեր բանակը հիմնական թարբերվում է գաղութային բանակներից: Նրա ամբողջ գյուղությունը, նրա ամբողջ կառուցվածքը հիմնված է մեր յերկրի ժողովուրդների միջև բարեկամական կապերի ամբացման վրա, ճնշված ժողովուրդների ազատազրելու վրա, ևորհրդային Միության կազմի մեջ մտնող սոցիալիստական հանրապետությունների ազատության և անկախության պաշտպանության գաղափարների վրա:

Նրա մեջ է մեր Կարմիր բանակի ուժի ու հղորության 3-րդ ու հիմնական աղբյուրը, գրա մեջ է յերաշխիքն այն բանի, վոր մեր բանակը կրթուկական բոպելին մեծագույն աջակցություն է գտնում մեր անձայրածիր յերկրում բնակվող բոլոր աղբությունների մալիոնավոր մասսաների կողմից:

Վեցառիս Կարմիր բանակի 3-րդ առանձնահատկությունը: Արդ առանձնահատկությունը ինեւրուացիոնալիզմի վոգու մեջ է, ինեւրուացիոնալիզմի զգացմունեների մեջ, վորոնցով համակած և մեր ամբողջ Կարմիր բանակը: Կապիտալիստական յերկրներում բանակները սովորաբար դաստիարակվում են գեպի այլ ժողովուրդները, զեպի այլ պետությունները, զեպի այլ յերկրների բանվորներն ու գյուղացիները տածած ատելության վոգով: Ինչու յե այդ արգում, վորպեսզի բանակը դարձնեն հնապահ մի հոտ: յերբ ընդհարումներ լինեն պետությունների միջև, յերկրների միջև, դրանումն է բոլոր կապիտալիստական յերկրների թուլության աղբյուրը: Մեր բանակը կառուցված է միանգամյան այլ հիմունքներով: Մեր Կարմիր բանակի ուժը նրանութեան է, վոր նա դաստիարակվում է իր ծագման առաջին իսկ որեւէց, ինտերնացիոնալիզմի վոգով:



գելու վոգով, յերկրների միջն խաղաղություն պահպանելու ու հաստատելու վոգով, բոլոր յերկրների բանվորներին սիրելու և հարգելու վոգով և հատկապես հենց այն պատճառով, վոր մեր բանակը դաստիարակվում և ինտերնացիոնալիզմի վոգով։ Բոլոր յերկրների բանվորների շահերի միասնության վոգով, հատկա պես հենց զրա շնորիվ ե, վոր նա, մեր բանակը, հանդիսանում և համաշխարհային հեղափոխության բանակ, բոլոր յերկրների բանվորների բանակ, ահա յերբորդ հիմնական առանձնահատկությունը, վորով համակված և մեր բանակի վոգին և վորը ստեղծում և նրա ուժի ու հզորության ազրյուրը....

ԽՆԶ ՍԿԶԲՈՒԽԵՆԵՐՈՎ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ

4. ԲԱՆԱԿԸ

Կարմիր բանակի շինարարության հիմքը հանդիսանում և յերկրային միլիցիոն սիստեմը, վորը ամբողջապես կապում և բանակը մեր վողի աշխատավորության հետ։

Դեռ 1926 թվից բոլոր զիվիզիաների 65,8 տոկ. կառուցված են այդ սկզբունքով։

Յերկրային սիստեմայի առավելությունն այն է, վոր բանակ կանչվող յերիտասարդությունը չի կտրվում իր արտադրական աշխատանքներից, գյուղատնհությանից, վոր այդ սիստեման հնարավորություններ և ստեղծում մասսաներին ավելի լայն չափերով ուղղմանականացման յենթարկելու, այդ սիստեմայով բանակի պահպանության համար պետությունը քիչ ծախս և անում։ Յերկրային սիստեման ամենանեֆտան սիստեման է։

Յուրաքանչյուր յերկրային հանդիսանում և Կարմիր բանակի նշանակության ու ուղղմական գիտելիքների տարածողը գյուղում և քաղաքում։ Յերկրային սիստեման բանվորներին ու գյուղացիներին հնարավորություն և տալիս 2 տարվա ծառայությունը փոխարինել նայած զորքերի տեսակների 8—11 ամիս ընդհանուր տևողությամբ, վորն անցնում են 5 տարվա ընթացքում ծառուայության առաջին տարում բանակի շարքերը կանչվերդ վարժական հավաքների յերեք ամսով։ Յերկրային զորամասերը ներկայում հանդիսանում են Մորհրդային Միության զինվածությունը հիմքը։

Յերկրային շինարարության այդ սիստեմայի կիրառումով

մենք նորից ենք ապացուցում մեր խաղաղասիրության քաղաքականությունը, մեր բանակի ընդհանուր թվի փոքրաքանակ լինելու հետ միասին։ Նրա թիվն ընդհամենը հասնում է 563 հազարի, վորի մեջ մտնում են և յերկրային գնդերի կազրային մասերը։

Յերկրային սիստեմայի առավելությունների մասին պետք է իմանա ամեն մի աշխատավոր և լայնորեն տարածի նրա գաղափարները, ու ամրացնի աշխատավորական խավերում։

Կարմիր բանակի յերկրային սիստեման միանգամայն ապացուցել ե, վոր նա ամենալավ ձևն և գալիք պատերազմի ժամանակ ճակատն ու թիկունքն ապահովելու տեսակետից։ Խաղաղ պալմաններում ներզրավելով, տասնյակ հազարավոր աշխատավորների, սազմական պատրաստության մեջ, յերկրային զորամասերի նախնական և ընդհանուր հավաքներն ապացուցել են ռազմական ուսուցման գործում իրենց բարձր վորակը, վոր Կարմիր յերկրայինը գրեթե վոչչով հետ չի մնում կադրային զորամասերում ծառայության կանչվածներից։ Սակայն ինչու յերկրային զորամասերի գոյության հետ միասին, վորոնց զնալով ավելի ծավալում և ընդարձակում ենք, գոյություն ունեն և կազրային զորամասեր։ Շատ պարզ, Քանի մենք ապրում ենք կապիտալիստական շրջապատում և ամեն որ ու ամեն ժամ սպասելի յե մեր գեմ պատերազմը, անհրաժեշտ ե կազը ու պատրաստուենենալ բանակ, վորը անհրաժեշտ մոմենտին կարողանա պաշտպանել հակառակորդից մեր սահմանները։

Կարմիր բանակի կադրային զորամասում հետևակում, հեծելագորում, հրետանային մասնակիության զորամասերում ծառայության կարգը սահմանված ե 2 տարով։ Մերձափնյա պաշտպանության և ողային նավատորմիզի ծառայության գործում՝ 3 տարով։

Շովային նավատորմում—4 տարի, յերկրային զորամասերի գոփոխական կազմում հինգ տարվա ընթացքում 8 ամիս։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ԲՈԼՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՆԱԿ Ե

Վերևում ասեցինք, վոր Կարմիր բանակը կազմված է բանաբաններից, կոլխոզներիկներից, աշխատավոր գյուղացիներից, Կար-

մեր բանակի շարքերն են անցնում մեր լերկրի մեջ գտնված բու-
լոր ազգությունների աշխատավորություններից:

Կարմիր բանակը ինտերնացիոնալ բանակ է, բոլոր ազգու-
թյունների աշխատավորության համերաշխառության բանակն է:
Նա կոչված է պաշտպանելու Խ. Ռ. Շ. Մ. ը, վորպես ամբողջ աշ-
խարհի պրոլետարների և աշխատավորների սոցիալիստական
հայրենիքը:

«Մեր բանակը դաստիարակվում է ինտերնացիոնալիզմի վո-
դով. բոլոր յերկրների, բանվորների շահերի միասնության վո-
դով, և հենց այդ պատճառով՝ մեր բանակը հանդիսանում է հա-
մաշխարհային հեղափոխության բանակ, բոլոր յերկրների քան
վորների բանակ» (Ստալին):

Խ. Ռ. Շ.-ի ժողովուրդների բազմազանությունը, աքտա-
ցոլվում է կ. բանակի կազմի մեջ, Կարմիր բանակում սուսները
կազմում են 64,5 տոկոս, ուկրայնացիք՝ 10,0 տոկոս, բելոռու-
ները՝ 5,1 տոկ., հրեաները՝ 2 տոկոս, թուրքերը՝ 6,4 տոկոս, լե-
հերը՝ 0,8 տոկոս, հայերը՝ 1,2 տոկոս, թաթարներ՝ 1,7 տոկոս,
վրացիք 1,3 տոկոս և այլն:

Իսկ այսպես չեր դրությունը ցարական բանակում, ինչպես
այդ տեղի ունի ներկայումս նաև բուրժուական բանակներում։
Այսպես որինակ, շատ ազգություններ, ինչպիսին են Աղբքեջանի
թուրքերը, բանակ չեյին թողնվում, շատերի իրավունքներն ել
ստեմանափակվում եյին ծառայությունն անցնելու ժամանակ։
Ցարը թույլ չեր տալիս ազգային փոքրամասնություններից շա-
տերին զինք կրելու, նրանց վստահություն չեր հայտնում և դրա
հետ միասին բանակի շարքերում խոր ազգային ատելություններ
սերմանում։ Այդ անում եյին Անդրկովկասում նաև դաշնակ-
ները, մենշերիներն ու մուսաֆատիստները, դուրս բերելով հայ,
վրացի ու թուրք աշխատավորներին իրար դեմ կովի։

Կարմիր բանակի շարքերում և նրա համալրման գործում
չկա ազգային խարություն։ Խորհրդային Միության մեջ գտնվող
ազգություններն ունեն իրենց ազգային զորամասերը, վորոնք
մտնում են Խորհրդային Միության կարմիր բանակի կազմի մեջ,
կազմելով միասնական բանակ։ Նրանք իրենց ազգային բնույթ
կրելու հետ միասին վանով չեն տարբերվում բանվորագյուղա-
ցիական կարմիր բանակից իրենց պարտականությունների կա-

տարման, ազգային զորամասերը վոչնչով չեն տարբերվում կար-
միր բանակի մյուս զորամասերից։ Միայն տարբերությունն
այն է, զոր այնտեղ ուազ և ական ուսուցումը տարվում և մայրե-
նի, բանակայինին հասկանալի լեզվով։ Մեզ մոտ, Անդրկովկա-
սում, կովկասյան կարմրագրոց Բանակի մեջ մանող հայկական,
վրացական և աղբքեջանյան ազգային զորամասերում, քաղա-
քական աշխատանքն ու ռազմական ուսուցումը տարվում և
Կարմիր բանակայինների մայրենի լեզվով։ Հրամանատարական
կազմն ու քաղաքական աշխատանքն ուսուցում են նույն ազգու-
թյուններից։

Մեզ մոտ, դաշնակները, հականեղափոխական տարրերը և
նրանց գործակալները փորձում են թունավորել մեր աշխատա-
վորության միտքը, միանգամայն սխալ մեկնաբանելով ազգային
զորամասերի կաղմակերպչական սկզբունքը, զեկով նրանց և
վողջ Կարմիր բանակի նպատակների մեջ տարբերություն։ Կու-
տաքակն ու գաշնակն աշխատում են լոցկվել կ բանակի շարքերը
նրա ինտերնացիոնալ միասնությունը քայլայելու նպատակով,
նացիոնալիստական թույն սրսկել վ բանակայինների մեջ։ Սա-
կայն այդ փորձերը ջախջախվել ե միշտ կջախջախվեն մեր աշխա-
տավորական մասսաների և Կարմիր բանակայինների կողմից։
Կոմկուսի գեկավարությամբ մենք կարողացել ենք կ. բանակա-
յինների ինտերնացիոնալ դաստիարակության ասպարեզուն
հսկայտկան նվաճումներ ձեռք բերել։

Մեր հերթական հիմնական ինդիբներից մեկը պետք ե լինի
շարունակել անողոք պայքարը մինչև վերջ, հարվածելով ազգա-
ցին նացիոնալիստական բոլոր տեսակի արտահայտությունները։
Ցուրաքանչյուր բանակ կանչվող զինակոչիկ զորանոց մանելով
պետք ե լավ իմանա, վոր վոչ թե մտավ «ազգային» բանակ, այլ
մի ինտերնացիոնալ բանակ, վորը կոչված ե պայքարելու բոլոր
ազգությունների աշխատավորության շահերի համար, համաշ-
խարհային հեղափոխության համար։

Ցուրաքանչյուր տարի հերթական զինակոչի ժամանակը
մեր դաստիարակային թշնամինները, գաշնակներն ավելի եյին ու-
ժաղացնում իրենց աշխատանքը, աշխատելով ազգային ատելու-
թյան թույն սրսկելու առաջին զինակոչիկ մեջ։ Այս և պատ-
ճառը, վոր մենք համախմբված կոմկուսի շուրջը և նրա զեկա-

Քարութլամբ ջախչախիչ հարված պետք և տանք զասակարգային թշնամու գաղնակի փոքրերին, ել պվելի ամրացնելով ազգային համերաշխություն և Կ. բանակի ինտերնացիոնալ դաստիարակությունը:

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆ Ե

Բանվորացյուղացիական Կարմիր բանակի շարքերը կանչվող յուրաքանչյուր դինակոչիկ պետք և իմանա, թե ինչպես է կազմակերպվել Կարմիր բանակը և ով է նրա առաջնորդը:

Շատերը չեն պատկերացնում այն հսկայական աշխատանքը, զոր Կարմիր բանակի կազմակերպման համար տարել և կոմունիստական կուսակցությունը, թեկուզ սկսած դեռ 1900-ական թվականներից, ընկեր Լենինի անմիջական ղեկավարությամբ:

Կոմկուսակցությունը դեռ այդ ժամանակներում բանվորացյուղացիական լայն մասսաների կազմակերպման, նրանց ցարիւ կալվածատերերի դեմ զուրս բերելու ընթացքում հատկապես զրագում եր պրոլետարիատի սպառագինման գործով.

Ահա ինչու բանվոր դասակարգը կարողացավ կոմկուսի և Լենինի արմիջական ղեկավարությամբ բանվորական զինված ջոկատներով զուրս գալ հոկտեմբերին՝ իշխանությունը նվաճելու համար։ Առանց վաղորոք զինվելու, զենքին սովորելու անհնար կիներ հաղթանակել մեր թշնամիներին։

Կոմ. կուսի ղեկավարությամբ եր, զոր Կարմիր բանակն այնքան հաղթանակներ տարածվ քաղաքացիական պատերազմի բարձր ճակատներում։

Քաղաքացիական կոիվներում կուսակցությունը մորիլի զայիշի յե յենթարկել և իր լավագույն անդամներին նետել Քաղաքացիական կովի ամենաղծվարին ճակատները։ Քաղաքացիական կաիվների ժամանակ, ամենաառաջազոր զիրքերում են յեղել 800-հազարից պվելի կոմունիսաներ։ Քաղաքացիական կոմիներում կուսակցությունը կորցրել ե՞ 50 հազարից ազելի անդամներ, զորոնք զո՞ն են գնացել զասակարգային թշնամու գնդակին։ Կուսակցությունը կարողացել և թշնամու թիկունքում կազմակերպել ապստամբություններ, կավել և բանդիտների ու կուլտուրայի դեմ։

Նու մացրել և Կարմիր բանակի շարքերում յերկաթյա զիւտական դիսցիպլինա, նու ամրացրել և Կարմիր բանակը, վերակազմելով ու դնելով միանգամայն ճիշտ հրմքերի վրա։ Այսոր Կարմիր բանակի մարտունակության ու բանակային մասայի քաղաքատիւրակության ասպարեզում ձեռք բերված նվաճումները—կուսակցության նվաճումներն են։ Անընդատ անում և կուս կազմակերպությունը Կարմիր բանակում։

Այն ժամանակ, յերբ Կարմիր բանակում կար 82 հազար բայլշավիկ, 1930 թվի հոկտեմբերի 1-ին նրանց թիվը արդեն հասել եր 146 հազարի։ Կոմյերիտականների թիվը 1929 թվի հունվարի 1 ին յեղել և 140 հազար, իսկ 1930 թվին հոկտեմբերի 1-ին հասել և 170 հազարի։

Կուսակցության ու կոմյերիտական խավը բանակի շարքային կազմում վերջին յերեք տարվա ընթացքում աճել է 17,8 տոկոսից հանելով 41 տոկոսի, իսկ մի շարք զորամասերում 70—86 տոկոսի։

Վերջին յերեք տարվա ընթացքում բանվորական՝ խավը Կարմիր բանակի կուսակցմակերպություններում բարձրացել է 41,7 տոկոսից մինչև 63,8 տոկոսի։ Կոմյերիտմիության մեջ՝ 37,5 տոկոսից մինչև 49,3 տոկոսի։

Այս վկայում ե Բ. Թ. Կ. բանակի վիթխարի քաղաքական ուժի և կայունության մասին։

Կարմիր բանակի կուսակցմակերպությունը հանգիստում է Համ. Կ. (ը) Կ. կոփկած, առաջավոր ջոկատներից մեջը և Լենինյան կենտկոմի ամուր հենարանը։

Ցերիասարդ զինակոչիկը պետք և գիտենա քաղաքացիական կոփկների փառավոր անցյալը, նա ուետք և պարզ գիտակցի, զոր առանց կոմիուսի ղեկավարության չկա Կարմիր բանակ, չկա հաղթանակ և պվելի լարելովիր ուժիրն ու յեռանգը Խորհուրդների յերկը պաշտպանության համար։

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից պատերազմերում խոշոր դեր է խաղալու տեխնիկան։ Ներկայում ովելի քան ուր կերպով բանակայինի և պետ կարմիր տառջ զրգած և տեխնիկան տիրատպելու խնդիրը

ըլ: Գալիք պատերազմում բոլոր բռւրժուական բանակները ավելի հագեցած կլինեն ռազմական տեխնիկայով քան այդ կար իմապերակալիստական պատերազմի ժամանակ: Կապիտալիստները հատուկ ուշադրություն են դարձնում բանակի տեխնիկայի, նրա մեքենայացման գործի վրա, վերջին հաշվով մարդկային ուժը, բանվորներից ու գյուղացիներից բաղկացած բանակը բռւրժուազիայի համար հենարան լինել չի կարող, յերբ նա ընդհարվի և. Ա. Մ. ի հետ: Կարմիր բանակը նույնպես տեխնիկապես հզոր պիտի լինի: Յերկի ծանր ինդուստրիան հնարավորություն և տալիս ռազմական տեխնիկան բարձր աստիճանի վրա գնելու: Մեր ռազմական բյուջեում ռազմական տեխնիկայի վրա ծախսվելիք միջ ցները զնալով ավելանում են, 23—25 թ. այդ նպատակով ծախսվում եր ռազմական բյուջեյի 36 տոկոսը, այժմ այդ հասցված է 50 տոկոսի:

Քաղաքացիական կոփներում մենք ողային ուժեր համարյա չունեյինք: Այժմ մեր ռազմական ողանավատորմն իրենից պատկառելի ուժ և ներկայացնում, վորը չեն կարող հաշվի չառնել մեր հակառակորդները: Մեր սեփական ավիոշինարարության, մանավանդ մատորաշինարարության հաջողություններն այժմ հայտնի յեն բոլորին:

Մեր սեփական կոնստրուկցիայի նոր հակա գաղը, վորն այժմ գտ' վում և մեր սպառազինման միջ, պաշտպանում է ներկայումս հայտնի բոլոր թյունավոր նյութերից: Ուժեղացել ե մեր ծովային նավատորմիզը, վորը ներկայացնում է իրենից մի հույսիու: ուժ:

Հակեր Վարոշիլովը ՀամեկթեՄ 9-րդ համագումարում ասաց, «Դամիք պատերազմը կլինի մեքենաների պատերազմ: Ինչպես և յուրաքանչյուր պատերազմում, զալիք պատերազմում նույնպես գործելու յե յերկու գործոն—մեքենան ու մարզը: Կովի տեխնիկական միջոցների դեմ մասին, վոր ունենաւ, ու յեն նրանք գալիք պատերազմում, վորոշ գաղափար տալիս ե իմպերիալիստական պատերազմը, վորն արդեն իսկ զգալի չափով մեքենաների պատուազմ եր, մանավանդ իր վերջում, այն է՝ 1917 և 1918 թ. թ: Հիշենք մի քանի թվեր: համաշխարհային պատերազմի ժամանակ առվող յերկրները պատրաստել եին գանազան տրամաչափի 1:200 միլիոն և ետանական արկ, 40 միլիարդ

հրացանային-գնդացիլային փամփուշտ: Արկերի, զենքի հրանդիների, փշալարերի և այլ տեսակի սպառազինման ու հանդերձանքի պատրաստման համար պատրաստված եր 60 միլիոն տոնն պողպատ: Համաշխարհային պատերազմի վերջում ֆրոնտներում կար մոտ 60.000 հրեանական հրանոթ, 15.000 սավանակ և 5.000 տանկ չհաշված պահեստի նյութական մասերը: Սպառազ պատերազմը մի քանի անգամ ավելի հաշեցած կլինի վոչնչացման բազմազան տեխնիկայով: Պատերազմի պատրաստության բնույթն ու կապիտալիստական բանակ երի ժամանակակից կազմակերպությունն ապացուցում են այդ լիակատարաններքելու թյունը:

